ԿԱՐԾԻՔ

Նանե Գառնիկի Սահակյանի հեղինակած «Պետական գնումների իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է պետական գնումների իրավական կարգավորումների ուսումնասիրությանը: Թեմայի արդիականությունը փաստվում է առաջին հերթին նրանով, որ պետական գնումների միջոցով Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ապրանքաշրջանառության բավականին մեծ մասը: Պետական գնումների դերը մեր իրականության մեջ գնալով ավելի է մեծանում, ինչը պայմանավորված է դրա կարևոր նշանակությամբ, մասնավորապես պետական ու համայնքային կառույցները, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձինք, շահագրգռված են լավագույն պայմաններով կազմակերպել իրենց գործունեությունը՝ ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռքբերել կամ վաճառել հնարավորինս ձեռնտու պայմաններով:

Պետական գնումների կազմակերպումը կարևոր նշանակություն ունի նաև բարեխիղճ մրցակցության կազմակերպման, հակակոռուպցիոն մեխանիզմների ճիշտ ներդրման, ինչպես նաև տնտեսության տարբեր ճյուղերի զարգացումը ճիշտ կազմակերպելու տեսանկյունից:

Պետական գնումների տնտեսական կյանքում ունեցած դերով և նշանակությամբ պայմանավորված կարևոր է նաև նշված հարաբերությունները կանոնակարգող իրավական կարգավորումների վերաբերյալ տեսական հետազոտությունների իրականացումը: Թեմայի արդիականությունը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ պետական գնումներին առնչվող ամբողջական հարցադրումները համալիր կարգով հետազոտության առարկա չեն դարձվել հայրենական իրավագիտության մեջ: Այս առումով որոշակի գիտական ու

գործնական արժեք են ներկայացնում բարձրացված հիմնախնդիրների կապակցությամբ հեղինակի առաջարկած հայեցակարգային լուծումները:

Ատենախոսության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հեղինակն ուսումնասիրել է ընտրված հարցերին անմիջականորեն վերաբերող մեծածավալ մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող իրավակիրառական նյութերը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերն ու առանձին եվրոպական պետությունների փորձը: Հատկանշական է նաև, որ հեղինակը չի բավարարվել միայն առանձին հեղինակների արտահայտած տեսակետների վկայակոչմամբ, այլ խորամուխ է եղել դրանց էության բացահայտման մեջ, առանձնացրել իր կարծիքով դրանց խոցելի կողմերը, հակադրել առկա այլ տեսակետների հետ և համակողմանի վերլուծության արդյունքում կարևոր եզրակացությունների հանգել նաև տեսական հարթության վրա:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնել առավել նպատակասլաց, խուսափել անհարկի կրկնություններից, նախապես ապահովել եզրահանգումների համար անհրաժեշտ հարցադրումների քննարկումը: Անհրաժեշտ ենք համարում նաև փաստել, որ աշխատանքը գրված է գիտական պատշաճ լեզվաոճով, դրանում բացակայում են լեզվական ու քերականական կանոնների շեղումներ:

Սեղմագրի և ատենախոսության ուսումնասիրությունն ու համադրումը վկայում են, որ պաշտպանության ներկայացված եզրահանգումներն ու ատենախոսության հիմնադրույթները համարժեքորեն արտացոլված են հեղինակի կողմից մշակված սեղմագրում:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրսևորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և հնարավորինս նորույթ հանդիսացող դատողություններ անելու անհրաժեշտ ունակություն: Բացի այդ,

ատենախոսությունում նկատվում է հեղինակի պատշաճ իրազեկվածությունը քննարկվող նյութին առնչվող տեսական աղբյուրների, գիտական տեսակետների, վիճակագրական տվյալների, պրակտիկ նյութերի ու միջազգային փորձի վերաբերյալ:

Ատենախոսության ձևավորումը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից սահմանված կանոններին: Այդ կանոններին համապատասխանում են նաև աշխատության կառուցվածքը և ծավալը:

Միաժամանակ, գտնում ենք, որ ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից, ինչի առնչությամբ ներկայացնում ենք որոշ դիտողություններ.

1. Պաշտպանության ներկայացվող 4-րդ դրույթով և ատենախոսության հետագա շարադրանքում առաջարկվել է մեկ անձից գնում կատարելու՝ «եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը» հիմքը փոխարինել «եթե անհնար է գնման այլ ընթացակարգի կիրառումը» հիմքով: Բացի այդ առաջարկվել է, որ նշված ընթացակարգի կիրառման դեպքերում մանրամասն հիմնավորվի ընթացակարգի կիրառման անհրաժեշտությունը՝ այն հրապարակելով հայտարարության կամ հրավերի տեքստում կամ առանձին որոշման տեսքով: Հեղինակը նշված դիրքորոշումը հիմնավորում է նաև նրանով, որ մեկ անձից գնումն ամենալայն հնարավորությունն է պարունակում չարաշահումների կատարման համար և հղի է մրցակցությունը սահմանափակելու լուրջ վտանգներով: Կարծում ենք հեղինակի կողմից բարձրացված խնդիրը իրոք արդիական է, սակայն առաջարկվող լուծման տարբերակը հղի է մեկ այլ վտանգով. այսօր հազարավոր կառույցներ ունենք /օրինակ՝ գրադարաններ, մշակույթի տներ, ամբուլատորիաներ և այլն/, որոնց տարեկան բյուջեն մի քանի հարյուր հազար դրամը չի գերազանցում, եթե 1 անձից գնում կատարելու ընթացակարգը ձևափոխենք առաջարկվող տարբերակով, ապա այս կառույցները պարզապես չեն կարող աշխատել գնման ընթացակարգը կազմակերպելու համար համապատասխան մարդկային և

ֆինանսական ռեսուրսներ չունենալու պատճառաբանությամբ: Հետևաբար ցանկալի կլիներ, որ այս առումով հեղինակը ավելի մանրամասն ներկայացներ առաջացող խնդիրների այլընտրանքային լուծումները: Թեպետ աշխատանքում հեղինակը որոշակիորեն անդրադարձել է մեր կողմից բարձրացված խնդիրների այլընտրանքային լուծումներին՝ առաջարկելով զարգացնել կենտրոնացված և համատեղ գնումների ինստիտուտները, սակայն կարծում ենք սրանք խնդրի ամբողջական լուծում չեն կարող համարվել: Օրինակ՝ այսօր խնդրահարույց է կենտրոնացված կամ համատեղ գնումների միջոցով բավարարել գյուղական ամբուլատորիաների դեղատնային պահանջները, որտեղ պարտադիր դեղեր մատակարարող կազմակերպությունների համար սահմանվում են շառավիղներ:

2. Ատենախոսության առաջին գլխի առաջին պարագրաֆում բավական երկար հիմնավորման արդյունքում առաջարկվել է «պետական գնում» արտահայտության փոխարեն օգտագործել «պետական բյուջեի միջոցների հաշվին պետական կարիքների բավարարում» արտահայտությունը՝ բնորոշելով այն որպես ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կամ այլ ակտիվների (արժեքների) ստացմանն ուղղված և պետական պատվերի վրա հիմնված գործընթաց, որը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Չնսեմացնելով այս մասով հեղինակի կատարած հիմնավորումները՝ կարծում ենք, որ աշխատանքն ավելի արժեքավոր կդառնար, եթե «պետական գնում» կամ ինչպես հեղինակն է անվանում «պետական բյուջեի միջոցների հաշվին պետական կարիքների բավարարում» եզրույթները ավելի խորը բովանդակային վերլուծության ենթարկվեին և դրան ավելի առաջնային տեղ տրվեր, քանի որ անկախ նրանից երևույթը «պետական գնում» կամ «պետական բյուջեի միջոցների հաշվին պետական կարիքների բավարարում» կանվանենք, միևնույնն է կիրառման տեսանկյունից այդ եզրույթների բովանդակությունն է կարևոր:

3. Ատենախոսության 3-րդ գլխի երկրորդ պարագրաֆում ներկայացվում է, թե իրենից ինչ է ներկայացնում գնումների հայտարարությունը և իրավացիորեն

մեջբերվում են տեսության մեջ ընդունված կարծիքները առ այն, որ գնումների հայտարարությունը միակողմ գործարք է կամ օֆերտա է կամ օֆերտա է գնման ընթացակարգին մասնակցելու համար և միաժամանակ օֆերտա անելու հրավեր է: Սակայն այդպես էլ վերջնական հիմնավորում չի բերվում այն մասով ի վերջո ըստ հեղինակի գնման հայտարարությունը միակողմ գործարք է, թե ոչ:

4. Ատենախոսության 3-րդ գլխի երկրորդ պարագրաֆում հեղինակը, նշում է, որ որևէ կարգավորում չկա այն մասին, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել ինքնարժեքի հիմնավորումը, ուստի նման կարգավորման պայմաններում մեծ է «մրցակցային ռեյդերության» վտանգը որպես հետևություն առաջարկվում է մասնակցից պահանջել ինքնարժեքի հիմնավորման վերաբերյալ ապացույցներ: Ավելին՝ հեղինակի կողմից փաստվում է, որ ոչ մի բարեխիղճ մասնակից իր գնային առաջարկը նվազագույնից ցածր չի ներկայացնի: Նման վարքագիծ կարող են դրսևորել կա'մ ոչ պրոֆեսիոնալ մասնակիցները, կա'մ ոչ բարեխիղճ մասնակիցները՝ նաև դրանով պայմանավորելով ինքնարժեքի հավաստման պարտավորությունը մասնակցի համար: Բնականաբար հեղինակի կողմից առաջ քաշվող խնդիրը արդիական է, սակայն առաջարկվող լուծումը կարծում ենք ոչ միանշանակ է: Այսպես, օրինակ՝ արդյոք այլ դեպք չի կարող լինել, երբ ապրանքը մատակարարվի իր ինքնարժեքից էժան գնով, սակայն մատակարարը բարեխիղճ և պրոֆեսիոնալ գտնվի /ապրանքի արագ չօտարման դեպքում դրա ոչնչանում, մասնակիցը դադարեցնում է իր գործունեությունը և այլն/: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, որ եթե մասնակիցը ոչ բարեխիղճ նպատակով է ցածր գին սահմանում, ապա այս մասով էլ համապատասխան կարգավորումներ կան տնտեսական մրցակցության պաշտպանությունը կանոնակարգող իրավական ակտերով:

Ատենախոսական աշխատանքի կապակցությամբ արտահայտված վերոնշյալ նկատառումները, սակայն, կրում են բանավիճային բնույթ և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Մեր գնահատմամբ՝ Նանե Սահակյան հեղինակած «Պետական գնումների իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսական աշխատանքը, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող ատենախոսական աշխատանքներին առաջադրվող պահանջներին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝ **Ս.Տ.ՖԱՐՄԱՆՅԱՆ**

Ասիստենտ, ի.գ.թ.

03.02.2020թ.

Ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ
ԻՐԱՎ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ **Հ.Մ. ԽԱՉԻԿՅԱՆ**